ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/303

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան
Մասնակից՝ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» գնանշման հարցում, աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17412-2021 գրությամբ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կապանի համայնքապետարանի 15.10.2021թ.-ի թիվ Ե-08/4530 գրության հիման վրա, 25.10.2021թ.-ին «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

25.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/303 համարի ծածկագիրը:

03.11.2021թ.-ին, 10.11.2021թ.-ին և 19.11.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2021թ.-ին:

2. Կապանի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Կապանի համայնքապետարանը 15.10.2021թ.-ի թիվ Ե-08/4530 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ միջև 2021 թվականի մայիսի 14-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 14400444 /տասնչորս միլիոն չորս հարյուր հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 16-ը:

«Մեծ Հիմք-1» ՍՊԸ նշված ժամկետում և այնուհետև աշխատանքներն իրականացրել է մասամբ: Արդյունքում սահմանված ժամկետում չի վերանորոգվել /մասնակի/ Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրը, որի անհրաժեշտությունը

պայմանավորված էր 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմում նահատակված և հուշահամալիրում հուղարկավորված 47 կապանցի հայորդիների գերեզմանատեղիների նորոգման, հուշաքարերի տեղադրման և տարածքի բարեկարգման աշխատանքների կատարմամբ:

Կապանի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը և օրենսդրությամբ սահմանված կարգով լուծման մասին ծանուցումը ուղարկել ՍՊ ընկերության էլեկտրոնային փոստին ու հրապարակել gnumner.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խնդրում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն 03.11.2021թ.-ին թիվ Ե-08/4885 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Կապանի համայնքապետարանի /այսուհետև՝ Պատվիրատու/ գրավոր հիմքերի համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից <<Մեծ Հիմք-1>> ՍՊԸ-ին /այսուհետև՝ Մասնակից/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՅ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի /այսուհետև՝ Ընթացակարգ/ կապակցությամբ ստորև ներկայացնում ենք գրավոր դիրքորոշում-առարկություն.

1. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման առաջին կետի վերաբերյալ.

Պատվիրատուն 2021 թվականին կազմակերպել է <<Կապան համայնքի կարիքների համար Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման>> ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով գնման ընթացակարգը/այսուհետև՝ Մրցույթ/, որի վերաբերյալ հայտարարություն-հրավերը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում /այսուհետև՝ Տեղեկագիր/:

Մրցույթի հրապարակման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնումների պլանը: Մրցույթին մասնակցել է Մասնակիցը: Մասնակցի առարկությունն այն մասին, որ Մրցույթը կազմակերպվել է իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի անհիմն է, սակայն չի խոչընդոտել Մասնակցին, ում հետ 2021թվականի մայիսի 14-ին կնքվել է 14400444 ՀՀ դրամ ընդհանուր գումարով ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով գնման պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/, և չի առաջացրել մտավախություն՝ ոչ իրավաչափության պայմաններում Մրցույթից ածանցյալ գործողությունների իրավաբանական ուժ չունենալու՝ այն է՝ շինարարական աշխատանքներ կատարելու և կատարված աշխատանքների դիմաց վճարումներ չստանալու համար, որը սակայն սահմանված կարգով կատարվել է պայմանագրի գործողության ընթացքում և Մասնակիցը կատարված աշխատանքների դիմաց ստացել է համապատասխան ֆինանսավորում:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով տրված է գնման առարկայի սահմանումը, այն է՝ գնվող ապրանք, աշխատանք, ծառայություն:

Գնման առարկան որպես այդպիսին ներառված է գնումների պլանում և առկա է Մրցույթի կազմակերպման իրավական հիմքը՝ Պատվիրատուի կողմից հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնումների պլան:

Գնումների միասնական անվանացանկը հանդիսանում է ութ նիշ ունեցող թվային ծածկագիր, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հետ: Ընդ որում, թվային ծածկագիրը ունի չորս մակարդակ և գնման ձևի ընտրությունը հիմնվում է անվանացանկի 2-րդ մակարդակում նշված թվերի վրա:

2021 թվականի ապրիլի 21-ին Պատվիրատուի գնումների փոփոխված պլանում թվային ծածկագրի տեխնիկական/մեխանիկական/ վրիպակը, որը նկատվելուց հետո շտկվել է 2021թվականի ապրիլի 30-ին, կարծում ենք պատճառաբանություն չէ մրցույթը ոչ իրավաչափ համարելու համար:

Մասնակցի հարցադրմանն ի պատասխան հայտնում ենք, որ Մրցույթը նախաձեռնվել է իրավաչափ, Մասնակիցը ստանձնել է պայմանագրային պարտավորություններ, այլապես ինչպես են հիմնավորվում նրա կողմից Կապան համայնքի Բաղաբուրջ հուշահամալիրում կատարված աշխատանքները:

2. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման երկրորդ կետի վերաբերյալ.

ա/ աշխատանքների կատարման վերջնաժամկետի վերաբերյալ.

Պատվիրատուի կողմից Մրցույթի հրավերի պայմանագրի նախագծի և կնքված Պայմանագրի պայմանների փոփոխության վերաբերյալ տեղեկացնում ենք, որ հրավերի պայմանագրի նախագծով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվել է՝ համաձայն կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի օրացուցային գրաֆիկի:

Գնման ընթացակարգով նախատեսված աշխատանքների ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված էր 2020թ.սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմում նահատակված և հուշահամալիրում հուղարկավորված 47 կապանցի հայորդիների գերեզմանատեղիների նորոգման, հուշաքարերի տեղադրման և տարածքի բարեկարգման աշխատանքների կատարմամբ:

Հաշվի առնելով, որ հուշահամալիրում 2020թվականի սեպտեմբերի 29-ին արդեն իսկ զոհվածների աճյուններ էին ամփոփվել, և նրանց մահվան տարելիցների սգո արարողությունների կազմակերպման կապակցությամբ գերեզմաններում շինարարական աշխատանքները պետք է ավարտված լինեն, Պատվիրատուի և Մասնակցի միջև ձեռք է բերվել փոխադարձ համաձայնություն՝ Մրցույթի պայմանագրի նախագծով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը 185 օրացուցային օրվա փոխարեն 125 օրացուցային օր սահմանելու վերաբերյալ: Փոխադարձ համաձայնության արդյունքում Մասնակիցը Պայմանագիրը կնքել է(ակցեպտավորել է) աշխատանքների կատարման 125 օրացուցային օր վերջնաժամկետով՝ մինչև 2021թվականի սեպտեմբերի 16-ը:

Փաստորեն, պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի պահանջները՝ պայմանագիրը կնքվել է պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ կողմերի միջև պահանջվող ձևով ձեռքբերված համաձայնության հիման վրա:

Հայտնում ենք, որ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի և Մրցույթի հրավերի 9-րդ՝ <<Պայմանագրի կնքումը>> բաժնի 9.7 կետի, հայտարարված Մրցույթի հրավերով նախատեսված պայմանների փոփոխությունը կնքված Պայմանագրում չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին.

<<Հոդված 36. Պայմանագրի կնքումը

..3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի

ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը>>:

<<9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

. .<<9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

9.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

9.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը>>:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի գործողության ընթացքում Մասնակիցը աշխատանքներն իրականացրել է ակնհայտորեն դանդաղ, երբեմն աշխատանքներ չի իրականացրել, և Պատվիրատուն զոհվածների մահվան տարելիցների արարողությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով 2021թվականի օգոստոսի 24-ի թիվ Ե-08/3805 գրությամբ դիմել է Մասնակցին՝ աշխատանքները կնքված

Պայմանագրով սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար, որին ի պատասխան ՍՊԸ-ն հայտնել է իր բարձր պատրաստակամությունը, ողջ աշխատանքային և տեխնիկական միջոցները ներդնելու հավաստումը՝ աշխատանքները կնքված Պայմանագրով սահմանված ժամկետում՝ 2021թ.սեպտեմբերի 16-ին ավարտելու համար:

բ/ աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգման վերաբերյալ.

2021թ.մայիսի 14-ին Պատվիրատուի և Մասնակցի միջև կնքված Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգման մասին գրության վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետի և պայմանագրի 8.8 կետի, <<....Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է>>:

Մասնակցի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգման մասին գրությունը ներկայացվել է ժամկետի խախտմամբ (2021թվական հոկտեմբերի 6)՝ Պայմանագրի վերջնաժամկետի ավարտից հետո, ինչը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և որևէ Պատվիրատու նման դեպքում չի կարող երկարաձգել պայմանագիրը:

գ/ լրացուցիչ ծավալով աշխատանքների կատարման վերաբերյալ

Լրացուցիչ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկացնում ենք, որ՝

- Պայմանագրի վերջնաժամկետի երկարաձգման մասին գրությունը ներկայացնելուց հետո Մասնակցի կողմից աշխատանքներ չեն իրականացվել,

- <<գլխադիրներում նկարների տեղադրում>> աշխատանքը նախատեսված էր Պայմանագրի ծավալաթերթով,

- <<լրացուցիչ՝ 50խմ հողային աշխատանքների>> կատարման վերաբերյալ ի սկզբանե մասնակիցը որևէ առարկություն չի ներկայացրել, իսկ աշխատանքների

ծավալների ավել կամ պակաս կատարման խնդիրները կարգավորվում են Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի և Կապալառուի միջև համադրման ակտեր կազմելու միջոցով, որը կատարելու համար Պատվիրատուն որևէ առարկություն չունի:

Մասնակցի հարցադրմանն ի պատասխան հայտնում ենք, որ Մասնակիցը իր իսկ կողմից հաստատված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պետք է կատարեր մինչև 2021թվականի սեպտեմբերի 16-ը և Մասնակիցը ոչ միայն խախտել է՝ չի կատարել պայմանագրային պարտավորությունները, այլև գլխադիրներում տեղադրելու նպատակով զոհվածների՝ հնդկական գրանիտի վրա ծեծված նկարները <<առգրավել>> է Պատվիրատուից և մինչ օրս չի վերադարձրել վերջինիս:

3. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման երրորդ կետի վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն <<...մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը>>:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն <<...Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ>>, 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն <<...պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին>>:

Պայմանագրի 3.1.4 կետ ա), բ) ենթակետերի համաձայն <<.....3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)>>:

Հաշվի առնելով Մասնակցի պայմանագրային պարտավորությունների չկատարումը, այն է՝ Պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքները չավարտելը, և հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները, 2021թվականի հոկտեմբերի 6-ի թիվ Ե-08/4423 գրությամբ Պատվիրատուն ծանուցել է Մասնակցին Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ՝ այն ուղարկելով Մասնակցի էլեկտրոնային փոստին և հրապարակելով Տեղեկագրում:

2021թ. հոկտեմբերի 12-ի թիվ Ե-08/4530 գրությամբ Պատվիրատուն դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու համար:

Մասնակցի հարցադրմանն ի պատասխան հայտնում ենք, որ Մասնակիցը խախտել է կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ այդ են վկայում վերոնշյալ հիմնավորումները:

4. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման չորրորդ կետի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն <<...Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ>>:

Պատվիրատուն 2021թվականի հոկտեմբերի 6-ի թիվ Ե-08/4423 գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը, գրությունը ուղարկել Մասնակցի էլեկտրոնային փոստին և հրապարակել Տեղեկագրում: Սույն գրությունը սխալմամբ թվագրվել էր <<2021 թվական սեպտեմբերի 6>>, որը նկատվելուց հետո շտկվել է <<2021 թվական հոկտեմբերի 6>> թվագրմամբ ու շտկված տարբերակը ուղարկվել Մասնակցի էլեկտրոնային փոստին, հրապարակվել Տեղեկագրում: Այդ են վկայում Մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկված նամակների քաղվածքը, Տեղեկագրում հրապարակված հայտարարությունների ցանկը, Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության հերթականությունը:

Մասնակցի հարցադրմանն ի պատասխան հայտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի խախտվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը:

Որպես հավելում հայտնում ենք, որ Մասնակիցը ստանձնել էր այնպիսի պարտավորություն և գործ ուներ այնպիսի աշխատանքի հետ, որ պարզապես անհանդուրժելի է արյուն թափած, մասնատված, մոխրացած, իրենց կյանքը մեր կյանքի ու մեր Հայրենիքի համար զոհած քաջորդիների աճյուններով ամփոփված հուշահամալիրի բարեկարգման, տապանաքարերի, գլխադիրների տեղադրման, գերեզմանատեղիների վերանորոգման աշխատանքները սակարկությունների, զուր քննարկումների առարկա դարձնելը:

Խնդրում ենք, Ֆինանսների նախարարության կողմից <<Մեծ Հիմք-1>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի վրաբերյալ որոշում կայացնելու ընթացքում հաշվի առնել վերոնշյալը:»:

Պատվիրատուն 10.11.2021թ.-ին թիվ Ե-08/4952 գրությամբ ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում ենք, որ Կապանի համայնքապետարանը 03.11.2021թ. թիվ Ե-08/4885 գրավոր դիրքորոշմամբ ներկայացրել է իր առարկությունները՝ Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի կապակցությամբ:

Այդուհանդերձ՝ որպես «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ կողմից ներկայացված դիրքորոշման 08.11.2021թ. լրացումների դեմ առարկություն՝ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերվում է արդեն իսկ կնքված պայմանագրում փոփոխություններ կատարելուն, այլ ոչ թե պայմանագրի նախագծին: Վերջինիս մեջ փոփոխություններ կատարելու կարգը սահմանում է Գնումների մասին ՀՀ օրենքը:

Մասնավորապես՝ գտնում ենք, որ տվյալ իրավահարաբերության նկատմամբ ավելի շուտ կիրառելի է Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որը սահմանում է. «...3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր: 4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:»:

Ելնելով վերոգրյալից և միաժամանակ հիմք ընդունելով մեր կողմից ներկայացված 03.11.2021թ. թիվ Ե-08/4885 գրավոր դիրքորոշումը, խնդրում ենք կայացնել որոշում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:»:

Պատվիրատուն 12.11.2021թ.-ին թիվ Ե-08/4980 գրությամբ ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Կապանի համայնքապետարանի /այսուհետև՝ Պատվիրատու/ գրավոր հիմքերի համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից <<Մեծ Հիմք-1>> ՍՊԸ-ին /այսուհետև՝ Մասնակից/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՅ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի/այսուհետև՝ Ընթացակարգ/ կապակցությամբ ներկայացված գրավոր դիրքորոշում–առարկությունների և որպես Մասնակցի կողմից արված առարկությունների ճշտում-պարզաբանում հայտնում ենք.

1. Պատվիրատուի գնումների պլանի փոփոխության մասին

Պատվիրատուն 2021 թվականին կազմակերպել է <<Կապան համայնքի կարիքների համար Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման>> ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով գնման ընթացակարգը/այսուհետև՝ Մրցույթ/, որի վերաբերյալ հայտարարություն-հրավերը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում /այսուհետև՝ Տեղեկագիր/:

Գնման առարկան որպես այդպիսին ներառված է գնումների պլանում և առկա է Մրցույթի կազմակերպման իրավական հիմքը՝ Պատվիրատուի կողմից հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնումների պլան:

2021 թվականի ապրիլի 21-ին Պատվիրատուի գնումների փոփոխված պլանում թվային ծածկագրի տեխնիկական/մեխանիկական/ վրիպակը, որը նկատվելուց հետո շտկվել է 2021թվականի ապրիլի 30-ին, իսկ 2021թվականի ապրիլի 21-ին համապատասխան ծածկագրով ներմուծված է գնումների ppcm.am համակարգի գնումների պլանի փոփոխություններում, որը նույնպես հանդիսանում է մրցույթի կազմակերպման իրավական հիմք:

Առաջարկով դիմում ենք մասնակցին՝ գնման գործընթացի իրավաչափությունը գնահատել մինչև Մրցույթին մասնակցելը, այլ ոչ թե ստեղծված իրավիճակում:

2. Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին.

Մասնակցի կողմից սխալ է ներկայացվում, որ 2021թվականի սեպտեմբերի 6-ին պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում է ուղարկվել Մասնակցին. նման ծանուցում չի ուղարկվել չի ուղարկվել/հավաստում Պատվիրատուի էլեկտրոնային փոստի screen shot/:

Մասնակցին ուղարկվել է աշխատանքները Պայմանագրով սահմանված ժամկետում ավարտելու մասին նախազգուշական ծանուցում ՝ 25 օգոստոս 2021թ., թվագրված 24 օգոստոս 2021թ. թիվ Ե-08/3805 գրություն և ստացվել է պատասխան գրություն ժամկետում ավարտելու մասին,

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ուղարկվել է ծանուցում՝ 2021թվականի հոկտեմբերի 7-ին՝ թվագրված՝ 06 սեպտեմբեր 2021թ, թիվ Ե-08/4423, որը շտկվել և ուղարկվել է 2021թվականի հոկտեմբերի 15-ին, թվագրված՝ 06 հոկտեմբեր 2021թ.. թիվ Ե-08/4423 գրությամբ/հավաստում Պատվիրատուի էլեկտրոնային փոստի screen shot/: Նշված 2 գրություններն էլ հրապարակվել են gnumner.am կայքում:

3. Պայմանագրի ժամկետների մասին

ա/ Մասնակիցը սխալ է ներկայացնում այն, որ Մրցույթի հրավերի պայմանագրի նախագծում ժամկետի ավարտը 185 աշխատանքային օր է՝ նշված է 185 օրացուցային օր: Սխալ է ներկայացնում, որ պայմանագրի նախագիծը armeps.am համակարգի ծանուցմամբ ուղարկվել է 185 աշխատանքային օրով՝ ծանուցված է 185 օրացուցային օրով: Մասնակցի կողմից, փոխադարձ պայմանավորվածության արդյունքում, պայմանագիրը հաստատվել/կնքվել, ստորագրվել/ ու ներկայացված է 125 օրացուցային օրով: Երբևէ պայմանագրի ժամկետի ավարտ աշխատանքային օրով նշում չի եղել:

բ/ Համաձայն 2021թ. սեպտեմբերի 16 վերջնաժամկետով փաստացի երկկողմ հաստատված պայմանագրի, վերջնաժամկետի երկարաձգում չի կարող արվել, եթե Մասնակցի կողմից գրությունը ներկայացվել է Պայմանագրի ժամկետի ավարտից հետո՝ 06 հոկտեմբեր 2021թ.՝ դա հակասում է Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը:

գ/ Մասնակիցը պայմանագրի վերջնաժամկետի 185/125 օրացուցային օր մասով սխալ հղում է կատարում կնքված պայմանագրի փոփոխությանը, քանի որ փոփոխությունը կատարվել է պայմանագրի նախագծում, այլ ոչ թե կնքված պայմանագրում, իսկ կատարված փոփոխություն չի հակասում Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և որի համար համաձայնագրեր և այլն անհրաժեշտ չեն:

4. Պայմանագրի ծավալների փոփոխության մասին.

Պատվիրատուի կողմից որևէ անգամ անհամաձայնություն չի եղել աշխատանքային ծավալների մասով կատարված փոփոխությունները օրենսդրությամբ սահմանված կարգով ամրագրելու համար:»:

3. <u>«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17412-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԷՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների

նախարարության պահանջը «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի է փաստել մասնակցին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք առկա է թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» գնման ընթացակարգի նախաձեռնման իրավական հիմքը և դրանով պայմանավորված արդյո՞ք «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերության մոտ ծագել են պարտավորություններ, թե՞ ոչ:

2. «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերությունը կողմերի միջև 14.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» պայմանագրով ստանձնած պարտավորությունները երբ պետք է կատարեր:

3. Արդյո՞ք «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 14.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

4. Արդյո՞ք «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերությունը կողմից՝ կողմերի միջև 14.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» պայմանագրով նախատեսված պարտավորությունների ենթադրյալ խախտումը արձանագրելուց հետք պահպանվել է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջները:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 1-ին հարցադրմանը հայտնեմ հետևյալը, որ՝

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

ույն կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Նույն կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար կատարվող գնումների դեպքում սույն ենթակետով նախատեսված ժամանակացույցը հաստատվում է գնման պահանջի ծագման օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում: (…):

Նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: (…):

Նույն կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ

աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնման գործընթացի իրականացման համար նախևառաջ պետք է իրականացվի գնումների պլանավորումը, որը երկու աշխատանքային օրվա ընթացքում պետք է հրապարակվի տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, որից հետո նոր միայն կարող ենք արձանագրել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի առկայության փաստը: Իսկ այն դեպքերում երբ առկա չէ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը, գործ ունենք Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների հետ և գնման ընթացակարգը ենթակա է չկայացած հայտարարվելու, որով պայմանավորված բացասական հետևանքների իրավական բեռը կրում է Պատվիրատուն, քանզի առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ձևավորված հանձնաժողը իրավազոր չէ և նրա որոշումները իրավաչափ չեն և չի կարող առաջացնել պարտավորություններ մասնակիցների համար և բնականաբար նաև պատասխանատվության հիմքեր: Իսկ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Օրենսդիրը նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ այն դեպքերում երբ, գործ ունենք առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի հետ, որտեղ

ընդհանրապես պետք է բացառել հանձնաժողովի ձևավորումը, և արդյունքում նրա կողմից կայացված ցանկացած որոշման ոչ իրավաչափ լինելը, ուստի նման պարագայում մասնակցի կողմից, առանց իրավական հիմքի կազմակերպված ոչ իրավաչափ գնման գործընթացի շրջանակում չեն կարող ստանձնվել պարտավորություններ և արդյունքում հնարավոր չէ արձանագրել դրա խախտում, ուստի և բացառվում է նշված պարագայում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Կապանի համայքապետարանը գնումների պլանում փոփոխություն կատարվել և հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի gnumner.am կայքի գնումների պլաններ բաժնում 21.04.2021 թվականին և 30.04.2021 թվականին, սակայն թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնման առարկան 45221142 CPV կոդով ներառվել է 30.04.2021 թվականի գնումների պլանի փոփոխությունում, իսկ թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերը հրապարակվել է 27.04.2021 թվականի, այսինքն ավելի վաղ քան գնումների պլանավորումը: Հաշվի առնելով նշվածը պետք է փաստել, որ թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստի առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ձևավորված հանձանաժողը իրավազոր չէ և նրա որոշումները իրավաչափ չեն և չի կարող առաջացնել պարտավորություններ մասնակիցների համար և բնականաբար նաև պատասխանատվության հիմքեր: Նշվածով պայմանավորված առկա չէ Ընկերության կողմից ստանձնած որևէ պարտավորության իրավական հիմք, ուստի դրա խախտման մասին խոսելը անհիմն է և առկա չէ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա երկրորդ հարցադրմանը, նշեմ հետևյալը,

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար

անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

2. Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Վերոգրյալի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել այն, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից հայտ ներկայացնելը և պատվիրատուի կողմից այն բավարար գնահատելն ու մասնակցին հաղթող ճանաչելը վկայում են կնքման ենթակա պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունը ձեռք բերելու մասին, իսկ պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը մասնակցին ուղարկելը նշանակում է օֆերտան ուղարկված, որի ակցեպտավորման հիմքով անթույլատրելի է դրա հետկանչելիությունը: Նշվածը դիտարկելով Գնման ընթացակարգի համատեքստում պետք է փաստել, որ մասնակցի կողմից պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելուց հետո օֆերտան համարվում է ակցեպտավորված:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի՝ «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերության կողմից հայտ ներկայացնելով, իսկ Պատվիրատուի՝ Կապանի համայքապետարանի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու արդյունքում պետք է փաստել, որ պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունները ձեռք են բերվել: Սույն դեպքում հրավերով նախատեսված էր, որ կատարման ենթակա աշխատանքները պետք է ավարտվեին պայմանագրի կնքումից հետո 185 օրացույցային օրվա ընթացքում, որը սպառվում է 15.11.2021 թվականին:

Սակայն Պայմանագրի հավելված 2-ի համաձայն խախտելով հրավերով նախատեսված պայմանը կատարման ենթակա աշխատանքների ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքումից հետո 125 օրացույցային օրվա ընթացքում, որը սպառվում էր 16.09.2021 թվականին: Աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ են եկել ծվալային փոփոխություններ, որը մեր կողմից կատարվել է, հաշվի առնելով խնդրի էություն և այն հանգամանքը, որ արդյունքում կատարվել է նաև «լրացուցիչ հողային աշխատանքներ 50խմ., գլխադիրներում նկարների տեղադրման» աշխատանքներ: Հաշվի առնելով նշվածը

Ընկերությունը խնդրել է 30 օրով երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետը, այն էլ այն դեպքում, երբ հրավերով նախատեսված 185 օրվա փոխարեն պայմանագրում նախատեսվել է 125 օր, որպեսզի հրավերով նախատեսված ժամկետում հնարավոր լինի ավարտել նախատեսված և ավելացված ծավալով աշխատանքները, որի համար Ընկերությունը փոխհատուցում չի ուզել: Ընկերության կողմից ոչ միայն ցուցաբերվել է բարեխիղճ գործընկերային և մարդկային մոտեցում, այլև իր պարտավորությունները կատարել է հրավերով սահմանված ժամկետում, քանզի հրավերը լինելով հրապարակային օֆերտա Ընկերության կողմից ակցեպտավորվել է աշխատանքների կատարման 185 օր ժամկետով: Նշվածով պայմանավորված պետք է փաստել, որ Ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունները պետք է կատարեր մինչև 16.11.2021 թվականը:

Անդրադառնալով 3-րդ հարցադրմանը, հայտնեմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Վերոհիշալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր

պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Ծառայությունների մատուցումը իր բնույթով հանդիսանում է պարտավորական իրավահարաբերություն, որի պարագայում կողմերից մեկը հանդես է գալիս որպես պարտատեր, իսկ մյուս կողմը՝ պարտապան: Ուստի պարտատիրոջ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունները պետք է կատարեր մինչև 16.11.2021 թվականը, սակայն Կապան Համայնքապետի 06 սեպտեմբեր 2021 թվականի թիվ Ե-08/4423 գրությամբ պայմանագիրը լուծվել է, հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի հասցնի աշխատանքները ավարտել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի բանավոր խնդրանքին ի պատասխան Ընկերությունը կատարել է նաև լրացուցիչ ծավալով աշխատանքներ, այդ իսկ պատճառով խնդրել է տրամադրել լրացուցիչ ժամկետներ: Եթե նույնիսկ հիմք ընդունենք այն հանգամանքը, որ Կողմերի միջև կնքված պայամանագրով աշխատանքների կատարման վերժնաժամկետ է սահմանվել 16.09.2021 թվականը, ապա Պատվիրատուն պայմանագրի գործողության ժամկետը 30 օրով երկարաձգելու դիմումը չբավարարելու պարագայում, ոչ թե պետք է պայմանագիրը միակողմանի լուժեր, այլ այդ մասին անհապաղ ծանուցեր, որպեսզի Ընկերութությունը կարողանար իր վարքագիծը համապատասխանեցնել դրդեղծված իրավիճակին և օրինակ լրացուցիչ աշխատուժ ներգրավվելով ավարտին հասցներ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը, սույն դեպքում Պատվիրատուն միակողմանի լուծել է պայմանագիրը մինչ դրա գործողության ժամկետի ավարտը:

Ուստի պետք է փաստել, որ Ընկերությունը թույլ չի տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում և Պատվիրատուի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում է լուժվել պայմանագիրը մինչ դրա գործողության ժամկետի ավարտը:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 4-րդ հարցադրմանը հայտնեմ հետևյալը.

Կարգ 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավական նորմով օրենսդիրը սահմանել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի նախաձեռնման հստակ ժամկետներ, որի բացթողնմամբ պայմանավորված սպառվում է դրա կիրառման հիմքերը:

Սույն դեպքում ըստ Պատվիրատուի արձանագրած ենթադրյալ պայմանագրային պարտավորությունների խախտման փաստով պայմանագիրը միակողմանի լուծվել է 06.09.2021 թվականին, այսինքն մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ի հայտ գալուց հետո չեն պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթները, որով պայմանավորված այլևս Ընկերությունը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Վերոգրյալի հիման վրա, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը:

Մասնակիցը 08.11.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետրյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգի շրջանակում լրացնելով դիրքորոշումս կապված Պատվիրատուի 03.11.2021 թվականի թիվ Ե-08/4885 դիրքորոշման վերաբերյալ հայտնեմ հետևյալը, որ իմ կողմից ներկայացված դիրքորոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգի դեմ առարկվել է չորս հիմքով:

Առաջին հիմքի, այն է գնման առարկան գնումների պլանում ներառված չլինելու հանգամանքի մասով Պատվիրատուն իր վերոհիշյալ գրությամբ ընդունել է և մատնանշել, որ տեղի է ունեցել թվային ծածկագրի տեխնիկական /մեխանիկական/ վրիպակ և որ այդ հանգամանքը պատճառաբանություն չէ մրցույթը ոչ իրավաչափ ճանաչելու համար:

Հայտնեմ հետևյալը, որ մասնակցի դիրքորոշման մեջ նշված պատճառաբանություններն ու իրավական հիմնավորումները ներկայացվում են

բացառապես գործում առկա փաստերից ելնելով, այլ ոչ թե՞ Պատվիրատուի սխալների ձևաչափից: Ուստի թվային ծածկագիրը սխալ նշելը և ուշացումով նկատել փոփոխելը Պատվիրատուի անփույթ աշխատանքի մասին են խոսում և հենց դա պատճառաբանություն չէ, թե՞ իբր տեղի է ունեցել վրիպակ և իվերջո ինչ նշանակություն ունի թե՞ ինչ պատճառով է գնումների պլանը սխալ հրապարակվել, այս հանգամանքը էական նշանակություն չունի սխալ հրապարակված գնումների պլանի փոփոխության պարագայում գործողությունների ոչ իրավաչափ ճանաչման մեջ:

Եվ երկրորդ, եթե թվերի սխալ նշելը տեխնիկական /մեխանիկական/ վրիպակ է, ապա նույն սկզբունքով Կողմերի միջև կնքված պայմանագրում աշխատանքների կատարման ժամկետը 125 աշխատանքային օր նշել էլ նույն կերպ տեխնիկական /մեխանիկական/ վրիպակ է և պետք է լիներ 185 աշխատանքային օր:

Ինչ վերաբերվում է պատվիրատուի այն դիրքորոշմանը, որ Կողմերի միջև 14.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» պայմանագրում կատարված փոփոխությունը չի հակասում Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին, ապա նշեմ հետևյալը, որ վերոհիշյալ պայմանագրում փոփոխություն կարող է կատարվել միայն գործող օրենսդրության բոլոր պահանջների պահպանման դեպքում: Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները կարգավորում են ոչ թե պայմանագրում փոփոխություն կատարելու կարգը, այլ այն թե գնման ընթացակարգի շրջանակում երբ է հնարավոր կատարել պայմանագրի գործողություն ժամկետներում փոփոխություն: Ինչ վերաբերվում է պայմանագրում փոփոխություն կատարելուն, ապա այն պետք է կատարվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ որի պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը ինքնին հանդիսանում է հրապարակային օֆերտա և մասնակցի կողմից դրա ակցեպտավորումը կատարվում է հայտի ներկայացման միջոցով, ապա հրավերի պահանջներում ներառված աշխատանքների կատարման ժամկետները, պետք է փոփոխվեն, նույն ընթացակարգով:

Անդրադառնալով Պատվիրատուի այն դիրքորոշմանը, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ի հայտ գալուց հետո չեն պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթները, ի պատասխան Պատվիրատուն հայտնել է, որ 06.10.2021 թվականի թիվ Ե-08/4423

գրությամբ ծանուցել է մասնակցին պայմանագրի միակողմանի լուծման մասին և հրապարակել տեղեկագրում, այնուհետ 12.10.2021 թվականին այդ մասին տեղեկությունները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն թիվ Ե-08/4530 գրությամբ: ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված թիվ Ե-08/4530 գրությունը 12.10.2021 թվականին հասցեագրելը չի համապատասխանում իրականությանը այն ուղարկվել է 15.10.2021 թվականին, ուստի խախտվել է Կարգի 45-րդ կետի դրույթները, նշվածով պայմանավորված գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը իրավազուրկ է:»:

4. <u>ՍՑ-LO-2021/303 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Կապանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի միջև 14.05.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) Հավելված 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված 2-ի՝ օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

iv. Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագրի կնքման օրը, իսկ ավարտը՝ պայմանագրի կնքման օրվանից 125 օրացուցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.10.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին06.10.2021թ.-ի թիվ Ե-08/4423 ծանուցման համաձայն՝ Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մայիսի 14-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 14 400 444 /տասնչորս միլիոն չորս հարյուր հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 16-ը:

Հաշվի առնելով, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ն աշխատանքներն իրականացնում էր այնքան դանդաղ, որ չի կարողանալու ավարտին հասցնել պայմանագրով սահմանված ժամկետում, համայնքապետարանը 2021 թվականի օգոստոսի 24-ին թիվ Ե-08/3805 գրությամբ դիմել է «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին՝ հաշվի առնելու աշխատանքների կարևորությունը և դրանք ժամկետում ավարտելու անհրաժեշտությունը:

Կապանի համայնքապետարանը 2021 թվականին «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից ստացել է պատասխան գրություն-հավաստում՝ աշխատանքները պատասխանատվությամբ կատարելու և ժամկետում ավարտելու պատրաստակամության վերաբերյալ:

«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ն աշխատանքները սահմանված ժամկետում և այնուհետև չի ավարտել, դրանք կատարել է մասամբ՝ ներկայացնելով 3379779 /երեք միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ գումարի կատարողական:

Հաշվի առնելով Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքներն անհապաղ ավարտելու անհրաժեշտությունը, «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի պայմանագրային պարտավորությունների չկատարումը և, հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը, համայնքապետարանը միակողմանի մասնակի լուծում է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացրել են, որ Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու

մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.10.2021թ. թիվ 26/26-1/17412-2021 գրությամբ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի միջև 14.05.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն սույն պայմանագրի Հավելված 2-ի՝ օրացուցային գրաֆիկի, որի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագրի

կնքման օրը, իսկ ավարտը՝ պայմանագրի կնքման օրվանից 125 օրացուցային օրվա ընթացքում:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.10.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 06.10.2021թ.-ի թիվ Ե-08/4423 ծանուցման համաձայն՝ Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մայիսի 14-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 14 400 444 /տասնչորս միլիոն չորս հարյուր հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 16-ը:

Հաշվի առնելով, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ն աշխատանքներն իրականացնում էր այնքան դանդաղ, որ չի կարողանալու ավարտին հասցնել պայմանագրով սահմանված ժամկետում, համայնքապետարանը 2021 թվականի օգոստոսի 24-ին թիվ Ե-08/3805 գրությամբ դիմել է «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին՝ հաշվի առնելու աշխատանքների կարևորությունը և դրանք ժամկետում ավարտելու անհրաժեշտությունը:

Կապանի համայնքապետարանը 2021 թվականին «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից ստացել է պատասխան գրություն-հավաստում՝ աշխատանքները պատասխանատվությամբ կատարելու և ժամկետում ավարտելու պատրաստակամության վերաբերյալ:

«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ն աշխատանքները սահմանված ժամկետում և այնուհետև չի ավարտել, դրանք կատարել է մասամբ՝ ներկայացնելով 3379779 /երեք միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ գումարի կատարողական:

Հաշվի առնելով Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքներն անհապաղ ավարտելու անհրաժեշտությունը, «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի պայմանագրային պարտավորությունների չկատարումը և, հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը, համայնքապետարանը միակողմանի մասնակի լուծում է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացրել են, որ Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 06.10.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 15.10.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը Հավելված 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետում չի կատարվել:

Անդրադառնալով «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ նշված այն հիմավորմանը, համաձայն որի՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու արդյունքում չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետը, ապա Բողոքնոր քննող անձը փաստում է հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ

իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Վերոհիշյալ իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 45-րդ հոդվածով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, սույն դեպքում՝ 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը, ի հայտ կարող է գալ միայն Պատվիրատուի կողմից Պայմանագրի 8.11 կետի և Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջի պահպանմամբ: Հակառակ դեպքում Պայմանագիր կնքած անձը (Մասնակիցը) չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված),

ըստ այդմ էլ՝ պայմանագիրը չի կարող համարվել լուծված (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ եկած), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները, այն է՝ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը (պատշաճ տարբերակը) Պատվիրատուն հրապարակել է տեղեկագրում 15.10.2021թ.-ին, որից հետո նույն օրը թիվ Ե-08/4530 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված գնման առարկայի գնումների պլանում ներառված չլինելու և գնումների պլանը www.gnumner.am կայքում հրապարակված չլինելու փաստարկներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գնման առարկայի՝ գնումների պլանում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքը սույն Ընթացակարգի քննության շրջանակներից դուրս է և ավելին՝ այդ հանգամանքով չի հաստատվում Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու վերջինիս մեղքի բացակայությունը: Հատկապես երբ՝ կողմերի իրավունքները և պարտականությունները ծագել են վերջիններիս միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ որպես ազատ կամքի դրսևորում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.10.2021թ. թիվ 26/26-1/17412-2021 գրությամբ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/303 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**